

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Պատկերները բաց է առաւտրան 10—2 ժամ
(բացի կիրակի և առաւ օրերից).
Պատկերները ընդունվում է ամեն լիզուով.
Պատկերները ընդունվում են համար վճարում են
խմբագրատան տնօրէնին 10 կոպէկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Գերատնտեսների գործը գաւառներում. Նամակ Գանձակից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի լուրեր. Արտաքին լուրեր.—ՆԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարդը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մենք հաղորդել էինք իր ժամանակին տեղեկութիւնները ուսանող երկրորդ նաւատորմի կազմակերպութեան մասին: Այժմ, օգտվելով նորագոյն հրատարակութիւններից (տես Բ. և Դ. Լրագիրներ) մենք կարող ենք որոշ գաղափար կազմել այդ նաւատորմի կազմութեան և նախապատրաստական գործողութիւնների մասին: Նաւատորմը կազմակերպվել է Բայրախիական ծովում, ուստի և յայտնի է բալթիական նաւատորմ անունով, իսկ Հեռուոր Արեւելքի ջրերում նա կը կոչվի խաղաղ-օվկիանոսեան երկրորդ նաւատորմ անունով:

Այդ նաւատորմը անգլիական «Times» լրագրի ասելով, բաղկացած է 6 դրահաւիր, 5 կրէյսէր, մի քանի ակամանաւ և ապրանքատար նաւերից, որոնց թիւն պէտք է աւելանան նաեւ երեք զինուորական նաւեր Կրօնշտադից: Հաւանական է, որ ճանապարհին կը միանան այդ նաւերին նաև ուսանական մի քանի օժանդակ կրէյսէրներ, որոնց մի մասը գնված է Գերմանիայից, իսկ միւս մասը կը վերցվի ուսանող կամուրջ նաւատորմից:

Թէև այդ նոր նաւատորմը ազատ չէ թերութիւններից, այնուամենայնիւ նրա նաւերը, ընդհանրապէս վերցրած, կազմում են մի ոյժ, որ կատարելապէս ընդունակ կը լինէր գլխավորել եւսօժանական նաւատորմին: Սակայն, չը պէտք է թագցնել, որ նաւատորմը իր վրա չափազանց ծանր յանձնարարութիւն է վերցրել: Եթէ ուշադրութեան անենք այն հանգամանքը, որ այդ նաւատորմը չէ կարող հասնել Հեռուոր Արեւելքի ջրերին դեկտեմբեր ամսից աւելի վաղ, որ Պորտ-Արտուրը կարող է չը դիմանալ մինչև այն ժամանակը, որ Վլադիվոստոկի նաւահանգիստը կարող է շուտով ծածկվել սառուցով, որ Ռուսաստանը չունի նաւատորմի ճանապարհին ոչ մի ծովային յենակէտ և որ նա անկարող է օգտվել չէզոք պետու-

թիւնների նաւահանգիստներից, այն ժամանակ երկրորդին պարզ կը լինի, թէ որքան ծանր և երկիւղալի է այդ ձեռնարկութիւնը:

Նաւատորմի Հեռուոր Արեւելք հասնելը թէև դժուարութիւններով, բայց նոյնպէս բոլորովին կարելի մի բան է: Ամենամեծ դժուարութիւնը կը սկսվի այն ժամանակ, երբ նաւատորմը ընդհարում մէջ կը մտնի թշնամու հետ: Եւ որքան աւելի շարունակվի ընդհարումը, այնքան պէտք է մեծանան նաւատորմի դժուարութիւնները:

Բայրախիական նաւատորմի ծովային Ռօժետովնսկի «Lokal Anzeiger» լրագրի թղթակցի հետ խօսակցելու ժամանակ յայտնել է թէ արդարև մի շարք դժուարութիւններ են առաջ եկել շնորհիւ այն բանին, որ Անգլիական կարգադրել է թոյլ չը տալով, որ ուսանական նաւերը քարածուխ վերցնեն անգլիական նաւահանգիստներում նոյն իսկ սեփական ապրանքատար նաւերից, բայց և այնպէս ծովայինը յոյս ունի յաղթել բոլոր դժուարութիւնները: Գարածուխը պէտք է ապրանքատար նաւերից փոխադրվի պատերազմական նաւերի վրա բաց ծովում, մի հանգամանք, որ երբեմն մեծ անյարմարութիւններ է ներկայացնում:

Իբրև ստորդ մի բան է համարվում, որ բալթիական նաւատորմը չէ գնալու Սուէզի ջրանցքով թէ քաղաքական պատճառներով և թէ այն, որ գրահակիները ջրի մեծ խորութիւն են պահանջում: Նաւատորմը պէտք է ուղղութիւն վերցնի գնալու դէպի Վլադիվոստոկ: Ծանապարհը կը պահանջէ մօտ երեք ամիս ժամանակ: Նա ներկայումս բոլորովին պատրաստ է: Ռուսական ծրագիրը, ասում է «Times»-ը, շատ խոշոր է և ինչով էլ նա վերջանայ, նաւատորմի շարժումը և նրա վիճակը ժամանակակից ծովային պատերազմի պատմական միջնադարերի շարքում նշանաւոր տեղ կը գրաւեն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ներկայ ծանր ժամանակում, երբ ուսանական պատերազմը այնքան մեծ, ահաւոր զոհեր է խլում Հեռուոր Արեւելքի դաշտերում, ուսանող մամուլի առաջաւոր մասը, խրախուսված այն համակրական վերաբերմունքից, որ

ցոյց է տալիս ներքին գործերի նոր միջնադարի իշխան Սվետապօլի Միլսկին դէպի հասարակական օրգանների ինքնագործունէութիւնն ու ինքնավարութիւնը, ընկնում է Ռուսաստանի ներքին կեանքի պակասութիւնները, որոնք ուղարկութեան արժանի են դառնում մանաւանդ պատերազմական դէպքերի պատճառով: «Մեր կարիքները» վերնագրով յօդուածի մէջ «Новости» լրագրին ասում է.

Ամենից առաջ ժողովրդական կեանքի աղքատութիւնը և անկերպարանութիւնը: Գիւղական ժողովուրդը, պետութիւն և կերպարողը, ամօթ է խոտովանել, ապրում է կէս-բաղցած: Զը կայ ճիւղային մէջ մի ուրիշ ժողովուրդ, որ ապրէր այնպիսի վատ պայմանների մէջ, ինչպէս ուսանող ժողովուրդը, որ ստեղծել է տարածութեամբ սեռագոյն պետութիւնը աշխարհում: Մեր գիւղացիներն չունի ոչ մահճակալ, ոչ անկողին, ապրում է խրճիթում անասունների հետ, նրա երեխաների երեք քառորդը միտնում է, նրա մօտ փող չէ մնում որ և է քարելուութիւն ստեղծելու համար: Զը կայ մի ուրիշ ժողովուրդ, որի հողը այնքան ուժաւատ լինի, որը թերեւեց այնքան նախնական, անասունները այնքան մանր: Զը կան ճիւղային գիւղացիներ, որոնց մէջ, ինչպէս մեզանում, միայն մի չորրորդը լինէր գրագետ: Զը կայ մի ուրիշ ժողովուրդ, ուր տարածված լինէր այնքան հիւանդութիւններ, ուր այնքան ձեռք լինէր ընտանիքում և այնքան արեւելութիւն, որ անխուսափելի է, քանի որ քաղաքային են կեցութեան մարդկային շատ ու շատ պայմաններ: Ժողովուրդը, որ երկար դարեր ընթացքում աշխատել է համարեա բացառապէս պետութեան համար, այժմ ինչն է կարօտում պետական օգնութեան: Նա թուլացել է ֆիզիքապէս և տընտեսապէս:

Այս դրութիւնը անյուսալի չէ գտնում լրագիրը: Կեանքը կարօտ է նպաստաշարժար ուղղութեան. նրան պէտք է կուլտուրայի, լուսաւորութեան պահանջների համապատասխան ընթացք տալ, և այն ժամանակ ժողովրդական առաջադիմութիւնը կը ստեղծէ Ռուսաստանի համար ամուր, անխախտի տընտեսական դրութիւն, ինչ ուղղութեամբ պէտք է գնայ այդ ցանկալի ընթացքը: Ռուս լրագիրը յաւանդութիւն չունի մի պատրաստ ծրագիր առաջարկելու: Բայց մի բանի ընդհանուր ցուցմունքներ է անում:

Ամենաչափաւոր, զգոյշ, ամեն մի ոգևորութիւնից հետո, բայց ապագայի մասին լուրջ մտածող մարդիկ չեն կարող չընդունել, որ ամենից առաջ պէտք է պետական միջոցների հնար եղածին չափ մեծ մասը յատկացնել գիւղական անտեսութեան կատարել վերանորոգութեան և աւելի անկախութեան, գործողութիւնների աւելի լայնարձակ շրջան յատկացնել այն հասարա-

կական օրգաններին, որոնք մեզանում արդէն կան: Բայց ներքին կեանքի զարգացման ազատ և արագ աշխուրթիւնների համար նոյնքան անհրաժեշտ են և այն լարդական միջոցները, որոնք կարող են խաղաղացում առաջ բերել, կապել բոլոր քաղաքացիներին, կազմել մի ամբողջութիւն, որ ոգևորված կը լինի ճշմարիտ հայրենասիրութեամբ, ոչ թէ առանձնացման, փոխադարձ անվստահութեան ոգով, այլ համաձայնութեան ոգով ընդհանուր ստեղծագործական աշխատանքի մէջ, որով պէտք է մշակվեն մի մեծ երկրի համար նրա հօրութեան արժանի կուլտուրական հարուստ պայմանները:

Առաջին կարգում դրված պիտի լինի օրէնքի ամենը համար պարտադր, անշեղ կատարումը, հրաժարվել օրէնքի վերաբերմամբ մասնատու քաղաքականութիւններից, վերացնել ամեն տեսակի քաղաքիկ օրէնքներ, Համաձայն այս սկզբունքի, որ առաջին անգամ Ռուսաստանում յայտարարեց Պետրոս I, պետութեան մէջ գոյութիւն ունեցող հին և նոր հիմնադրութիւնները պէտք է միասին կազմակերպել, որ նրանցից ոչ մէկը հակառակ չը լինի այն հիմնարկութիւններին, որոնք երաշխաւորում են օրէնքի վրա հաստատված իրաւունքները: Կատարել կրօնական համընդունութիւն պիտի լինի և պէտք է բոլորովին հրաժարվել այլալորս և այլացի աղգութիւնները որ և է պարտադր-պետական ձեռք վերածելուց:

Այս բոլոր միջոցները, լրագրի կարծիքով, շատ կը նպաստեն, որ Ռուսաստանի առաջադիմութիւնը արագ քաղցրով գնայ:

Նոյն ոգով խոսում է և «С. Петерб. Вѣд.» լրագիրը, նիւթ ընտրելով նոր միջնադարի այն խօսքերը, թէ կառավարութիւնը պէտք է վրաստանութեամբ վերաբերվել հասարակութեան: Լրագիրը այդ վստահութեան անհրաժեշտութիւնը ցոյց է տալիս բազմաթիւ օրինակներով:

ԳԵՐԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԸ ԳԱՆՈՒՆԵՐՈՒՄ

Ինչպէս յայտնի է ամուր բացվելուն պէս, դերասանները մեծ մասամբ թողնում են կենսորոնները: Բազում ու թիֆլիսը ու գնում ցերվում են գաւառները Ժողովրդական մտքի ստեղծագործութիւնները բնի վրա ցոյց տալով: «Մեր ըով դերասան կուգայ»... Օ՛հ, դիմէ որքան ոգևորութիւն, որքան նորութիւններ ու եռանդ է ներշնչում այս նախադասութիւնը գաւառացու արտում: Այս խօսքս լաւ կը հասկանան այն գաւառացիները, որոնք ամեն լայնից զրկված, չունեն հասարակական տիկեր, մտքի փոխանակութիւն և որոնք կենքի անտուր միակերպ շարժումից արդէն ձանձրացել են: Նոյն իսկ գաւառացի երիտասարդի մէջ չը

ծերի միջով, մեն-մենակ հիւսաւուրց ճշմարտութիւնների աւելանքի միջով:

Փառահեղ, հպարտ և ազատ, նա արիաբար նայում է ճշմարտութեան աչքերին և ասում իր տարակուսանքներին.

—«Դուք ստում էք՝ սաւելով որ ես անգոր եմ, որ իմ գիտակցութիւնը սահմանափակ է: Գիտակցութիւնս աճում է: Ես այդ գիտում, տեսնում եմ, զգում եմ—նա իմ մէջ աճում է: Ես ըմբռնում եմ իմ գիտակցութեան աճումը տանջանքների ոյժով և—գիտում—թէ նա չաճէր, ես առաջվանից աւելի չէի տանջվի:

—«Բայց իւրաքանչիւր բայափոխում ես էլ աւելի շատ եմ ցանկանում, էլ աւելի շատ եմ զգում, աւելի շատ, աւելի խոր եմ տեսնում, և իմ ցանկութիւնների արագ աճումը—գիտակցութեան հօր աճումն է: Այժմ գիտակցութիւնս իմ մէջ նման է կայծի—հազա լինէ Ախր կայծերը—հրդեհների մայրերն են: Ես ապագայում—տիեզերքի խաւարի մէջ հրդեհն եմ: Եւ ես կոչված եմ, որպէս զի լուսաւորեմ ամբողջ աշխարհը, հայեմ նրա զաղտնի հանգուկների խաւարը, ներդաշնակութիւն գտնեմ իմ ու աշխարհի միջև, ներդաշնակութիւն ստեղծեմ ինքս իմ մէջ և, լուսաւորելով կեանքի ամբողջ մոտայլ քառք այս տառապած—տանջված երկրի երեսին՝ ծածկված, որպէս մարթո հիւանդութիւնը, գեթախուրթիւնների,

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Մ Ա Ր Դ Ը

(Մարտի Գործիք)

II

Ահա նա յոգնած, տատանվում է և հեծեծում. անարեկ սիրտը Հաւատ է փնտրում և բարձրաձայն խնդրում սիրոյ ընթուզ գգուանքներ:

Եւ անգորութիւնից ծնված երեք թռչուն—Վնամուռներ, Յուսահատութիւնը, Թախիճը,—երեք սև անճոռնի թռչուն—չարագուշակ թառում են նրա հոգու վրա և ամենքն էլ նրա համար տխուր երգ են երգում այն մասին, որ նա մի չնչին միջան է, որ նրա գիտակցութիւնը սահմանափակ է, միտքը անգոր, սուրը հպարտութիւնը ծիծաղելի և ինչ էլ որ անելու լինի, նա պիտի մեռնի:

Գողգոթում է նրա յօշոտած սիրտը այդ երգից՝ որ և կեղծ է, և չար. տարակուսանք, ներքի ստեղծելով ծակոտում են նրա ուղեղը, աչքերի մէջ փայլում են վերաւորանքի արտասուքներ...

Եւ եթէ հպարտութիւնը նրա մէջ չը վրդովվի, Մահի երկիւղը տիրաբար քշում է Մար-

դուն դէպի Հաւատի բանտը, Սէրը՝ յաղթական ժողովով, հրապուրում է նրան դէպի իր գրկը: Թագցնելով մեծանշան խոստումների մէջ բախտի ազատ լինելու տխուր անգորութիւնը և բնագրի անյապ բռնակալութիւնը...

Ստի հետ գաշակից, երկնու Յոյսը երգում է ժողովու համար հանգստի ուրախութիւններ ի մասին, երգում է հաշտութեան անգորք բախտի մասին և ընթուզ, գեղեցիկ խօսքերով օրօրում է Նիքոնոյ ոգին, հեծելով նրան քաղցր Մուլութեան տղի և Թախիճի թախիճի մէջ, որ յոյսի աղջիկն է:

Եւ, կարճատես զգացմունքների ներշնչումով, նա շտապով յագեցնում է ուղեղն ու սիրտը այն ցինիկ Ստի հաճելի թոյնով, որ բարձրաձայն սովորեցնում է, թէ Մարդու համար չը կայ մի ուրիշ ճանապարհ, բացի ինքն իրանից գոհ լինելու դէպի անասնանոց տանող ճանապարհը:

Բայց Միտքը հպարտ է, և Մարդը թանգ է նրա համար—որ չար կոխ է մղում Ստի դէմ, իսկ կուի դաշտը—Մարդու սիրտն է:

Որպէս թշնամի, Միտքը հաղածում է նրան, որպէս որդ, անդադար կրծում է ուղեղը, որպէս երաշտ, ամայացնում է կուրծքը և, որպէս դահիճ, ասնջում է Մարդուն, անողորմաբար սեղծելով նրա սիրտը աշխուժացնող սառնութեամբ ճշմարտութեան մասին, կեանքի

դաժան իմաստուն ճշմարտութեան մասին, որ թէև դանդաղ է աճում, բայց պարզապէս երևում է մոլորութիւնների աղջակալի միջից, ինչպէս մէկը հեղին ծաղիկներից, որ ծնված է Մարցից:

Սակայն եթէ Մարդը Ստի թոյնով թունաւորված է անբուժելի և արդէն հաստատ հաւատում է, որ երկրի երեսին չը կայ լիբը ստամոքսից ու հոգուց աւելի բարձր լախտ, չը կայ կուտ լինելուց, հանգստութիւնից ու մանր-մունք տառաւոյ յարմարութիւններից աւելի բարձր երջանկութիւն, այն ժամանակ ցնձագին զգացմունքի գերութեան մէջ Միտքը տխուր ցած է թողնում թեկը և—նիւհում, թողնելով որ Մարդը մնայ իր սրտի իշխանութեան ներքոյ:

Եւ, որպէս վարակիչ ամպ, բորբոսնած ցածութիւնը՝ զարնչիլ Տիւրութեան աղջիկը, ամեն կողմից սողում է դէպի Մարդը, ծածկելով կծու, գորշ փոշիով նրա՝ և ուղեղը, և սիրտը, և աչքերը:

Եւ Մարդը կորցնում է ինքն իրան, վերափոխված իր թուլութեամբ անասունի, առանց հպարտութեան և Մարքի...

Սակայն եթէ վրդովմունքը բռնելի նրա մէջ, նա կը զարթոնէ Միտքը, և նորից կը գնայ առաջ մեն-մենակ իր սխալների փշերի միջով, մեն-մենակ իր տարակուսանքների կիզիչ կայ-

կայ եռանդ—այն աստիճան միակերպ է կենսաբան Գալատեոսի այդ միակերպ կենսաբան փոխ-
վում է ներկայացուցիչներով, որոնք, ինչպես
յայտնի է, շատ էլ է փոփոխվում նստում:

Շատ անգամ «Մշակի» էջերում տպվել են
այս ու այն գալատից թղթակցություններ, որ-
անի ի միջի այլոց խոսվել է թե այս ինչ տե-
ղը ներկայացում տրվեց, գրասանը կատարվեց,
և այն որոնք ձանձրոյթ են պատճառում մեծ
քաղաքի ընթերցող հասարակությանը. նոյն իսկ
առաջնորդողների նիւթ է դարձել: Բայց գա-
լատում ներկայացում տալը, (էլ չեմ խոսում
գիտաբանությունների մասին) մի այնպիսի նո-
րություն է, որ շարաթերթի խոսակցություն
նիւթ է լինում և անա այդ է պատճառը, որ
գալատի թղթակցից չի կարողանում այդ մեծ
նորությունը մոռանալ:

Անա այդպիսի միջոցառում գերասանների
գործը շատ մեծ է: Այստեղ նրանք հանդիսա-
նում են թարմությունները ու նորությունները
մարմնացումը և քանի որ նրանք շատ կարճ
ժամանակ են մնում, ուստի պէտք է այնպիսի
պիտաններ ընտրեն, որոնք թե օշոկ գրեւծը-
ներ լինեն և, որ պիտաններ են, պիտաններ, որոնք
սիրողների ոյծից վեր լինի: Օրինակ, եթե
գերասանը պալիս է գալատ ու մի քանի փոք-
րիկ վոլեյբոլիսներ դնելով խաղում, գնում է,
գալատիս էլ նպատակին ծառայած չի լինի
քանի որ սեղանային սիրողները, նոյն բանը
կարող էին խաղալ, թէև աւելի թոյլ, իսկ այն
պիտանները, որոնք աւելի բեմական հմտու-
թիւն են պահանջում գալատիս անմատչելի են
մնում:

Կարելի է գերասաններից առարկողներ լի-
նեն թէ ինչպէս խաղանք գալատում գիտաբան,
պատասխանատու պիտէ, քանի որ դեկորա-
ցիաներ չը կան, բեմը յարմարութիւններ չու-
նի և այլն և այլն. այո, ճիշտ է, չը կայ այն
բոլորը, ինչ կարելի է տեսնել մեծ քաղաքնե-
րում, բայց չէ որ եթէ այդպէս դատելու լի-
նենք, գալատը չը պիտի տեսնի խելացի, լուրջ
պիտաններ, բացի մի քանի վոլեյբոլիսներից, ո-
րոնք մի կերպով «եռալ» կը տեսնին և սի-
րողները: Չէ որ քիչ էլ ժողովրդի մասին
պէտք է մտածվի և ամեն անգամ նրա ան-
տարբերութիւնը չի կարելի դատափետել:

Եւ որ քիչ քանի գերասանի շնորհքը, գար-
մացած հարցնում է գալատացին: «Ինչպէս
կանք, միթէ գերասաններ եթէ վոլեյբոլի կամ
մի թեթիւ բան խաղայ, դա կը նշանակէ թէ նա
շնորհք չունի, սիրողից չի տարբերվի, չէ որ
գերասանի խաղը մտածված, խելացի կը լինի,
ոչ մի պատահականութիւն չի մտնի նրա խա-
ղի մէջ, իսկ սիրողը կը խաղայ ինչ որ «առատ
եկաւ»: Այո, այդ բոլորը ճիշտ է, բայց գա-
լատացին այդպիսի մեծ քանակի մասին չի
մտածում, քանի որ սիրողի խաղն էլ նրան
բաւականութիւն է տալիս (խօսքս բացառու-
թիւնների մասին չէ):

Մի հասարակ օրինակ բերեմ ասածս ապա-
ցուցանելու համար. Թիֆլիսը շատ է տեսնել
անմոտանալի Շէկալիթի «Համէտի» մէջ շատ
ու շատ գերասաններ և եթէ այժմ մեկը վեր
կենայ և խաղայ նոյն բանը, հասարակութիւ-
նը կը լսի թատրոնը իմանալու, թէ ինչպէս կը
խաղայ այդ նոր պարոնը, ինչպէս կարտասա-
նէ այս կամ այն կտորը՝ շտապ թէ գանդալ,
իսկ եթէ գալատում մի և նոյն պիտան

տիրութեան, վշտերի, չարութեան կեղեւով,
այս բոլոր չար կեղեւը երկրից աւելի ան-
ցալի գերեզմանի մէջ:

—Ես կողմն եմ, որպէս զի բաց անեմ բո-
լոր մարտիկներին և սխալների հանգոյց-
ները, որոնք կաշկանգել են աւաքիկ մարդ-
կանց որպէս անասունների արեւնահեղ և զղ-
վելի մի գունդ, փոխադարձաբար միմեանց
լափող:

—Ես ստեղծված եմ Մաթից նրա համար, որ-
պէս զի տակն ու վրա անեմ, կործանեմ, ոտի
տակ տամ այն բոլորը, ինչ որ հին է, ինչ որ
անձուկ է, կեղտոտ և չար,—և ստեղծեմ նորը,
ինչ Միաբը կուր-գարնել է ազատութեան,
գեղեցիկ և՛ դէպի մարդկանց յարգանքի ան-
սասան հիմունքների վրա:

—Անհաշտ թշնամի մարդկային ցանկու-
թիւնների անարգ խեղճութեան, կամենում եմ,
որպէս զի մարդկանցից իւրաքանչիւրը Մարդ
լինի:

—Անմիտ, ամօթալի ու զգուշի է բոլոր
այս կեանքը, ուր ոմանց ոյծից վեր և ստըր-
կական աշխատանքը ամբողջապէս անհետ
գնում է այն բանին, որպէս զի միւսները չա-
փից դուրս լիանան թէ հացով և թէ ոգու
պարգևներով:

—Թող անիծվին բոլոր նախապաշարմունք-

կրկնվի, որը դեռ թարմ է ժողովրդի յիշողու-
թեան մէջ, թատրոնը դատարկ կը մնայ, ինչ-
քան էլ հանձարեղ խաղացող լինի՝ երկրորդ,
գերատանը, քանի որ գալատացին չի գնում
թատրոն այս կամ այն կտորը նորից տեսնե-
լու, ճաշակը զգրգոյցելու, այլ գնում է իմա-
նալու պիտի բովանդակութիւնը:

Մէկ էլ առհասարակ պէտք է աշխատել պի-
տաներ ընտրել ժողովրդական կեանքից, որ-
պէս զի նա լիակատար բաւականութիւն ստա-
նայ, նրա հերոսներով ապրի. իսկ ֆրանս-
սիական ճաշակով գրված «ժողովրդ» պիտաններ
գալատացու համար անպէտք են, նոյն իսկ
գալատացին պատմական պիտանների սիրա-
հար է:

Ցանկալի է, որ դրամատիկական ընկերու-
թիւնը առանձին ուղարկութիւն դարձնէ և ա-
ւելի հաստատ հիմքերի վրա դնէ գալատական
ներկայացումները:

3. Բարեօրոնաց

Ախալցխա

ՆԱՄԱԿ ՊԱՆՉԱԿԻՅ

Սեպտեմբերի 23-ին

Սեպտեմբերի ուրուականը այնքան փոք է մեզա-
նից, որ երբեմն սկիւրբեր են տարածվում՝ նրա
Գանձակ Ժամանակը յայտարարող ու հաստատող
ասում են, որ նա այդքան մոռաց է գործել մեր
քաղաքը, որ թուրքերի մէջ մահման դէպքեր
պատահել ու պատահում են խօսքայից, բայց
նրանք ծածկում են, իշխանութեան չեն յայտ-
նում, վախենում են բռնիչներից, կարծելով, թէ
նրանք «գեղում են» խօսքայով հիւանդացած-
ներին ու այդպիսով արագացնում նրանց մա-
հը: Մեր խաւար ամբիւր դատում էր այդպէս,
այդ կարծիքին էր նա 1892 թ. 12 տարվայ
ընթացքում նրա աշխարհայեցողութեան մէջ
համարեա ոչ մի փոփոխութիւն չէ տեղի ու-
նեցել դէպի լաւը:

Հաստատ դեռ ոչինչ չէ յայտնի. պաշտօնա-
պէս խօսքայի գոյութիւնը Գանձակում չէ
հաստատված, բռնիչներին ոչ մի դէպք դեռ
յայտնի չէ, բայց քանի որ Բագուում նա գո-
յութիւն ունի, ամեն օրպէ կարող է մուտ
գործել նաև Գանձակ, որը առևտրական սերտ
յարբերութեան ու մշտական շրման մէջ է
գտնվում առաջինի հետ: Այժմ մեր քա-
ղաքը ամենայնաբար վաղ է ներկայացնում
խօսքայի ծագման ու զարգացման համար,
քանի որ միջերի ժողովման ու մրգակերու-
թեան ամենատար անգոն է մեղանում. ազ-
գաբնակչութեան չունեւոր խաւերը կերակրվում
են այժմ գլխաւորապէս մրգերով, խաղողով
ու ցամաք հացով և խմում են արիւնքի ու
ջրհորների զարկնոտ, դանազան օրգանական
մարմիններով հարուստ ջուրը: Եթէ խօսքան
մուտը գործէ Գանձակ, այն ժամանակ, հաւա-
նական է, նա այնպիսի լայն ծաւալ կը ստա-
նայ, որ Գանձակը իր հոշակաւոր խաղողի
հետ միասին կառաքէ Թիֆլիս նաև բացիլներ:

Թիֆլիսը, մեր համեստ կարծիքով, այժմ
պէտք է որոշ չափով հոգ տանի նաև Գանձա-
կի մասին. ուղարկէ այստեղ գոնէ էֆանդին
հրատարակութիւններ խօսքայի մասին, պե-
տական ու տեղական լեզուներով, ձրիաբար
ժողովրդի մէջ տարածելու, ուղարկելով նոյն
իսկ ձեռնհաս մասնագէտ դասախօսներ աւերիչ

ները, բոլոր կանխակալ կարծիքները և սովո-
րութիւնները, որոնք կաշկանգել են մարդկանց
ուղիղ ու կեանքը մածուցիկ սարգի ոտապ-
նի պէս: Դրանք արգելք են լինում ապրելու
բնութիւն գործելով մարդկանց վրա: Ես դե-
րանց կը կործանեմ:

—Միաբը—իմ գէնքն է, իսկ Մաթի ազա-
տութեան, աներկբայ մտաւորութեան, նրա ան-
մահութեան, նրա ստեղծագործութեան յաւի-
տեանեան անմահ մէջն է իմ ոյծի անսպաս
աղբիւրը:

—Միաբը ինձ համար յաւերժ է միակ ճըշ-
մարիտ փարոսն է կեանքի մութի մէջ, հուրը
կեանքի անարգ մոլորութիւնների խաւարում:
Ես տեսնում եմ, որ նա աւելի պայծառ է
վառվում, աւելի խորն է լուսաւորում գաղտ-
նիքների վրէժը, և ես գնում եմ անմահ Մաթի
ճառագայթների լուսով նրա ետեւից, միշտ դե-
պի վեր, դէպի առաջ:

—Մաթի համար չը կան անխորտակելի
ամբողջութիւններ, չը կան անդրդուելի սրբու-
թիւններ ոչ երկնքում և ոչ էլ երկրի վրա:
Բոլորը ստեղծվում է Մաթից, և դա տալիս է
նրան սուրբ, անկապտելի իրաւունք՝ քանդել
ամեն բան, որ կարող է արգելք լինել նրա
անմահ ազատութեանը:

—Հանգիստ գիտակցում եմ, որ նախապա-

հիւանդութեան մասին խօսելու համար: Գան-
ձակը այնքան հարուստ չէ նիւթապէս ու բա-
րոյապէս, մտաւոր, ինտելիգենտ ոյծերով, հա-
սարակական սրտացաւ գործիչներով, որ ամեն
բան ինքն իր սեփական ոյծերով ու միջոցներով
անէ: Հարուստ հարկանք ներկայ բացառիկ
դէպքում եթէ ոչ մարդասիրական, գոնէ իր
օտնի տեսակէտից պէտք է նայէ գործին ու
մի բան անէ, օգնութեան ձեռք մեկնէ իր
խեղճ ու կրակ հարեանին...

Մեր քաղաքային վարչութիւնը, առողջա-
պահիկ հոգաբարձուների ու բժշկների որոշ-
ման համաձայն, կարգադրել է քաղաքի բաղ-
մաթիւ ջրհորները ծածկել ու այլափոխել ար-
գելի է օգտվել նրանց ջրերով, մի այն-
պիսի չնաշխարհիկ ջրերով, որոնք մեծ մա-
սամբ ժողովում են... արտաբնական, անց-
նելով հողային շերտերով ու այդպիսով զրտ-
վելով դանազան խառնուրդներից: Ջրհոր-
ները փորում են մեզանում հայաթների
կենտրոնում, խորութեամբ մինչև 5—6, նոյն
իսկ մինչև 10 սաժէն: Սովորական բան
է մեծ հայաթներում նրանց ջրջապատ-
ված տեսնել մի քանի արտաբնականով. յա-
ճախակի արտաբնական, փորված նոյնպիսի խո-
րութեամբ, գտնվում է հազիւ երկու-երեք
քայլ հեռու ջրհորից. երկու գոգահոնական
փոսերից մինը ընդունում է իր մէջ մարդկանց
արտաբնականութիւնները, իսկ միւսը մատա-
կարարում է նոյն մարդկանց ջուր, գլու-
խաւորապէս նոյն արտաբնականութիւնից զսլած...
Եւ այդ մեղանում գոյութիւն է ունեցել և ու-
նի Գանձակի հիմնադրութեան օրից սկսած և
մի օտաք էր նշանակում, ինչ ուղարկութիւն են
դարձրել նրա վրա ու միջոցներ ձեռք առել
դարաւոր չարիքին վերջ դնելու: Բայց հազիւ
թէ այդ աշողվի. ծածուկ օգտվում ու օգտվե-
լու են ջրհորներից: Շատ ցանկալի է գոնէ, որ
վտանգի տեղութեան ընթացքում քա-
ղաքային վարչութիւնը խոսքայի հետ
մուտ լինի գործին ու թոյլ չը տայ իր որո-
շումը խախտել, օգտվել ջրհորների ջրով: Պէտք
է լուրջ մտածել ազգաբնակչութեան մաքուր
ջուր մատակարարելու մասին լուսային աղ-
բիւններից: Շատերին դարմանալի կը թւայ,
թէ լինելու տեղական թղթակցից ջրհորների
ջրի վրա մինչև հիմա ուղարկութիւն չէ
դարձրել ու այժմս է միայն խօսում պարզ
է. խօսքայի պէս աղէտը բանում է մեր աշ-
քերը ու ստիպում նկատել չարիքներ, որոնց
մոտով մենք տարիներ շարունակ անտարբե-
րութեամբ անցել ու անցնում ենք: Ջրհորներ
ամենից շատ գտնվում են թուրքերի թաղե-
րում: Ջրհորները խափանվել են, բայց ար-
խիւր շարունակում են իրանց գոյութիւնը,
իրանց կեղտոտ ջրերով ոռոգում են քաղաքը:
Քանի որ արխիւր խափանել անհնարին է,
պէտք է գոնէ խափել արգելի արխիւրում
լուսացք անելը, որը սովորական է մեզանում:
ամենակեղտոտ փախաններ լուսանում են ար-
խիւրում: Եթէ այդպիսի դէպքերում առողջա-
պահիկ հոգաբարձուները արձանագրութիւններ
կազմեն ու լուսացարաններին պատասխանա-
տուութեան, առգանքի ենթարկեն, այդ չա-
րիքը եթէ չը վերանայ, գոնէ կը սահ-
մանափակվի Պէտք է խիստ հսկո-
ղութեան տակ պահել քաղաքի բաղանիսները,
մասնաւոր թուրքերի մասում գտնվողները,

շարժունները—հիւանուրց ճշմարտութիւննե-
րի բեկորներն են, իսկ բազմաթիւ մոլորու-
թիւնները, որ այժմ պտղատվում են կիսնիւթ
շուրջը, բոլորն էլ ստեղծված են հին արգա-
րութիւնների մոլորից, որոնք այրված են դա-
ձաւ նոյն Մաթի բացով, որ մի ժամանակ դե-
րանց ստեղծագործել է:

—Եւ գիտակցում եմ, որ յաղթող են հա-
ղիստում ոչ թէ նրանք, որոնք վերցնում են
յաղթութեան պտուղները, այլ միայն նրանք,
որոնք մնում են կուռի դաշտում...

—Կեանքի իմաստը—ստեղծագործութեան
մէջ եմ տեսնում, իսկ ստեղծագործութիւնը
ինքնագոյացնող է և անսահման:

—Գնում եմ, որպէս զի որքան կարելի է
աւելի պայծառ այրում և աւելի խորունկ
լուսաւորում կեանքի խաւարը: Եւ ինձ համար
կորուստը—իմ հատուցումն է:

—Ուրիշ հատուցումներ ինձ պէտք չեն.
ես տեսնում եմ. իշխանութիւնը—ամօթալի է
և տխուր, հարստութիւնը—ծանր և յիմար
բան է, իսկ փառքը—նախապաշարմունք, որ
ծագել է մարդկանց իրանք իրանց գնահատել
չը գիտեանալուց և ստորանալու իրանց ստրկա-
կան սովորութիւններից:

—Ճարակուսանքներ. դուրս—միայն Մաթի
կայծերն է, աւելի ոչինչ: Ինքն իրան փուր-

որոնք միշտ լինն են լինում մարդկանցով, ա-
ւելի կին յաճախորդներով: Այստեղ էլ կարող
է նոյնը կրկնվել, ինչ որ պատահել է Բագ-
ուում:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք արդէն յայտնել էինք, որ Լօձի գոր-
ծարանատէրերը, աչքի առաջ ունենալով բաւ-
բալի գները աստիճանաբար բարձրանալը,
մտաւորութիւն են յայտնել Մուգանի դաշտա-
վայրում բամբակի ցանքներ սկսել: Այժմ ար-
դէն այդ դրամատէրերը հիմնել են մի ընկե-
րութիւն և դիմել են երկրագործութեան մի-
նիստերի կողմանէս լիազօրին, որ իրանց
յատկացնէ Մուգանի անապատում որոշ հողա-
բաժին բամբակի ցանքների համար:

Ինչպէս յայտնի է, Սրբից շատ մասնատա-
կաններ փախչում էին Թիւրքիա, յոյս ունե-
նալով, որ այնտեղ շատ փառաւոր, հանգիստ
ու հարուստ վիճակ կունենան: Բայց դառն ի-
րականութիւնը ցոյց տուեց, որ փախչողները,
հակառակ Մէքքա գնացած ուխտաւորների ա-
ռասպելական պատմութիւնների, հակառակ
համախառն քարոզներ անող դանազան
մուք անձերի խոստումների, ընկան դառն
աղբատութեան մէջ: Անցեալ տարի դրանք
խնդրէին ներկայացրել տեղական նահանգ-
ապաւիտ, որ իրանց թոյլատրվի վերադառ-
նալ ծննդավայր: Այժմ «Լր. Եթ. Եթ.» լրագիրը
լսել է, որ հիմք կայ յուսալու, թէ շուտով
այդ խնդրատու թաթարներին կը թոյլատրվի
վերադառնալ Սրբի:

Ինչպէս յայտնի է, Բագուի թուրք ինտելի-
գէտներից «զարգացած», լուսամիտ կոչված
մասը, կարողացաւ ընդունել տալ քաղաքային
սանիտարական գործադիր յանձնաժողովին իր
մի ծրագրը—հիմնել մի առանձին խօսի-
րային հիւանդանոց մուսուլմանների համար:
Այժմ արդէն Բագուի քաղաքապետը պաշ-
տօնակատար Բեկաւսկին յանձնել է քաղա-
քային ճարտարապետ Սկուրիլիչին կազմելու
այդպիսի մի հիւանդանոցի յատակագիծ: Այդ
յատակագիծը կազմվելու է մի հիւանդանոցի
համար, որը պարունակէ 40 մահճակալ և որը,
պէտք եղած դէպքում, կարելի լինի աւելի ևս
մեծացնել:

Կովկասի զինաւոր վարչութիւնը թոյլատրել
է Կարսի քաղաքային վարչութեանը 1905
թիւ քաղաքային ծախքերի մէջ մտցնել հետե-
ւեալ գումարները. 1) 600 ռ. կեղեցեցական
ծխական դպրոցի պահպանութեան համար օ-
ժանդակութիւն, 2) 300 ռ. վիճակային տա-
ճարին օժանդակութիւն երգեցիկ խումբ պա-
հելու համար և 3) 1,200 ռուբլի քաղաքային
դպրոցին՝ 2 ուսուցիչների համար վարձա-
տրութիւն:

Մի խումբ գերմանացի դրամատէրեր Վարշա-
ւայում մի ակցիօնէրական ընկերութիւն են
հիմնել, որի նպատակն է հողաբաժիններ գնել
և նրանց վրա բնակարաններ շինել:

«Ք. Օւ.»-ի թղթակցից հեռագրում է, որ

ձելով, Միտքը մնում է ձեզ ոյծի առատու-
թիւնից և կերակրում Ձեզ—հէց իր ոյծով:

—«Կը գայ օրը—իմ կրծքում մի մեծ և
ստեղծագործող բոցի մէջ կը ձուլվեն—իմ
զգացմունքներ աշխարհը իմ անմահ Մաթի հետ,
և այդ բոցով ես կըսեմ կը տամ իմ հողու մի-
ջից ինչ որ մուկն է, անգութ և չար, և ես
կը նմանվեմ այն աստուածներին, որ իմ Միտ-
քը ստեղծագործել է և ստեղծագործում է:

—Ամեն բան Մարդու մէջ, ամեն բան—
Մարդու համար»

Անա նորից, վիճապանք և ազատ, հպարտ
գլուխը բարձր բռնած, նա դանաղադրէն, բայց
հաստատուն քայլերով, գնում է հիւանուրց
նախապաշարմունքների աճիւնի վրայով, մին-
մեկնակ մոլորութիւնների գորշ մշուշի մէջ,
նրա ետեւից—ծանր ամպի պէս անցեալի փո-
շին է, իսկ առջեւ—կանգնած են անվերջ հա-
նիւղեկներ, որոնք անզգայօրէն սպասում են
նրան:

Այդ հանիւղեկները անթիւ են, ինչպէս աստ-
ղերը երկնքի անգունդի մէջ, և—Մարդու հա-
մար ճանապարհը վերջ չունի:

Այդպէս ընթանում է խռովայոյ Մարդը՝
դէպի առաջ և դէպի վեր, միշտ դէպի առաջ,
միշտ դէպի վեր:

Կ. Կրասիլնիկեան

